Ծախսերի փոխհատուցման համար դիմելու ընթացակարգ

Շահառուն, Ծրագրի փոխհատուցման բաղադրիչով փոխհատուցում ստանալու ակնկալիքով, մինչև այգու հիմնումը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում է նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով տեղեկատվություն այգու տեղի, չափերի ու տեսակի վերաբերյալ, ինչպես նաև այգեհիմնման ծախսերի համապատասխան հաշվարկներ:

Նախարարության համապատասխան ստորաբաժանումները դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված տեղեկատվության համաձայն ուսումնասիրում են այգու տեղանքը, հողի օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթի առկայությունը և համապատասխանության կամ անհամապատասխանության մասին տեղեկացնում շահառուին: Նախարարության համապատասխան ստորաբաժանումը հաշվառում է դրական պատասխան ստացված շահառուների դիմումները:

Այգու հիմնման աշխատանքների ավարտից հետո 35-րդ կետում նշված ընթացակարգով հաշվառված շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում է նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) կաթիլային ոռոգման համակարգի ձեռքբերման հաշիվ-ապրանքագիրը և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի կամ կապալառու կազմակերպության հետ պայմանագրի պատճենը և վճարման անդորրագիրը, եթե այգեհիմնումն իրականացվել է կապալառու կազմակերպության միջոցով,

2) տնկանյութի ծագումը և որակը հավաստող փաստաթղթի (հավաստագիր), բուսասանիտարական հավաստագրի պատճենները և ձեռքբերման հաշիվ-ապրանքագիրը,

3) այգեհիմնման աշխատանքների ծախսերը հիմնավորող փաստաթղթեր կամ կապալառու կազմակերպության հետ պայմանագրի պատճենը և վճարման անդորրագիրը, եթե այգեհիմնումն իրականացվել է կապալառու կազմակերպության միջոցով

4) Եթե տեղադրվել են կարկտապաշտպան ցանցեր, ապա դրանց ձեռքբերման հաշիվ ապրանքագիրը և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը կամ կապալառու կազմակերպության հետ պայմանագրի պատճենը և վճարման անդորրագիրը, եթե այգեհիմնումն իրականացվել է կապալառու կազմակերպության միջոցով,

Նախարարության համապատասխան ստորաբաժանումները դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված փաստաթղթերն ու տեղեկատվությունը (դիտարկումներ այգու տարածքում) և

տեղեկացնում են շահառուին փոխհատուցման տրամադրման կամ փոխհատուցման մերժման մասին:

Փոխհատուցման մերժման հիմք է հանդիսանում.

- Շահառուի կողմից կեղծ տեղեկատվություն տրամադրելը,
- Ծրագրով սահմանված պահանջները չպահպանելը կամ նախարարության կողմից մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված սույն Ծրագրի պայմանների խախտումը,

Փոխհատուցման ենթակա գումարը փոխանցվում է շահառուի հաշվեհամարին համապատասխան պայմանագիրը կնքելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: